***Նախագիծ***

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ «ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ, «ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊՈՐԱՅԻՆ ՄԱՐԶՈՒՄՆԵՐ *( **ՍՈՒՍԵՐԱՄԱՐՏ** )* » ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ

2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐՄԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Ընդունելության քննությունները անցենկացվում են երկու վարժություններից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 1-10 միավորով

**Վարժություն 1.** Շարժումների տեխնիկայի գնահատում

ա/ քայլեր առաջ և հետ՝ արտանկներով
բ/ ոստյուններ առաջ և հետ՝ արտանկով
գ/ խոցելի տարածություններ և պաշտպանություններ
դ/ մոտ, միջին և հեռու տարածություններից կատարվող խոցումներ և հարվածներ ուղիղ անցումով:

Վարժության կատարման ժամանակ թույլ տված հնարավոր սխալները՝

1. Մինչև արտանկը ձեռքերի ոչ ճիշտ ուղղում առաջ
2. Իրանի թեքում առաջ դեպի հենված ոտքը, արտանկի ժամանակ
3. Արտանկի ժամանակ հրող ոտքին երբ անի և ծնկի ոչ ճիշտ ուղղում
4. Արտանկից մարտական դրության ոչ ճիշտ ընդունում
5. Ոստյունի ժամանակ թափային ոտքի առաջ մղելը

Յուրաքանչյուր սխալ կատարելու դեպքում ընդհանուր միավորների քանակից հանվում է երկու միավոր:

| **ՄԻԱՎՈՐ** | **ԿԱՏԱՐՎԱԾ ՍԽԱԼՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ** |
|---|---|
| 10 | Սխալ չկատարելու դեպքում |
| 8 | 1 – սխալի դեպքում |
| 6 | 2 – սխալի դեպքում |
| 4 | 3 – սխալի դեպքում |
| 2 | 4 – սխալի դեպքում |
| 0 | 5 – սխալի դեպքում |

**Վարժություն 2.** Աշխատանք թիրախին՝ տեխնիկայի գնահատում

ա/ խոցումներ կամ հարվածներ նշանակետին

բ/ մոտ, միջին և հեռու տարածությունից կատարվող խոցումներ և հարվածներ նշանակետին /քայլով, արտանքով և ոստյուն-արտանքով/

Վարժության կատարման ժամանակ թույլ տված հնարավոր սխալները՝

1. Զինված ձեռքի և դաստակի ոչ ճիշտ դիրքավորում
2. Հարվածի և խոցման ոչ ճիշտ կատարում
3. Ոստյունով արտանկի ժամանակ մեկ ոտքով ոստնելը
4. Տարածության ոչ ճիշտ ընտրություն խոցման կամ հարվածի ժամանակ
5. Քայլերի ընթացքում ոտքերի ոչ ճիշտ դիրքը

Յուրաքանչյուր սխալ կատարելու դեպքում ընդհանուր միավորների քանակից հանվում է երկու միավոր:

| ՄԻԱՎՈՐ | ԿԱՏԱՐՎԱԾ ՍԽԱԼՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ |
|---|---|
| 10 | Սխալ չկատարելու դեպքում |
| 8 | 1 – սխալի դեպքում |
| 6 | 2 – սխալի դեպքում |
| 4 | 3 – սխալի դեպքում |
| 2 | 4 – սխալի դեպքում |
| 0 | 5 – սխալի դեպքում |

Վերջնական գնահատականը որոշվում է երկու վարժություններից վաստակած մավորների ընդհանուր գումարով:

Ընդունելության քննությաննորմերը և գնահատման չափորոշիչները կազմվել են հիմք ընդունելով ՀՀ սուսերամարտի ֆեդերացիայի կանոնակարգը և օգտվելով հետևյալ գրականությունից (Ռ.Թ.Կարապետյան, Մարզական գործընթացի կազմակերպման հարցերը սուսերամարտում, Ուսումնականձեռնարկ):

**ՌԵԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝ Դ.Ս. ԽԻԹԱՐՅԱՆ**